

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏԻ ԽՆԴԻՐԸ

Ռ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԴԴ գրադարանավարուհի

Առաջին համաշխարհային պատերազմը, որը մղվում էր հակամետ ձգտումներ ունեցող երկու ռազմաքաղաքական խմբավորումների՝ Անտանտայի և Քառյակ Միության միջև, ավարտվեց առաջինի հաղթանակով: Պարտված երկրների հետ պայմանագիր կնքելու, սեփական արտաքին քաղաքական խնդիրները լուծելու խաղաղություն երաշխավորող նոր միջազգային կազմակերպության՝ Ազգերի լիգայի ստեղծման շուրջ ընթացող բանակցությունների ժամանակ առավել ցայտուն կերպով դրսևորվեցին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի և Ճապոնիայի միջև գոյություն ունեցող հակասությունները, որոնք կապված էին ձեռք բերված հաղթանակից առավել օգուտներ քաղելու ձգտումների հետ: Պարտված Օսմանյան Թուրքիայի տարածքների ապագայի հարցը, որն ամենասերտ կերպով կապում էր Արևմտյան Հայաստանի ճակատագրի հետ, ևս մեկ անգամ ցույց տվեց, որ Արևելյան հարցի լուծման մեջ գլխավոր դերակատարում ունեցող երկրների միջև տարածայնությունները չեն վերացել: Եթե ընթացող պատերազմի պայմաններում Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ձեռք էին բերել համաձայնություն Օսմանյան Թուրքիայի տարածքների բաժանման վերաբերյալ այդ ընթացքում չմոռանալով օսմանահպատակ ժողովուրդների ձգտումները սեփական շահերին ծանայելը, ապա հետպատերազմյան աշխարհում արտաքին քաղաքականության ասպարեզում տեղի էին ունեցել լուրջ փոփոխություններ. Ռուսաստանի Խորհրդային իշխանությունները միակողմանիորեն, երկիրը դուրս էին բերել պատերազմից, հրապարակել էին գաղտնի համաձայնագրերը ու թեև Անգլիան և Ֆրանսիան հերքում էին դրանց գոյության փաստը, նրանք ստիպված էին հաշվի նստել ստեղծված իրողության հետ: 1917թ. Հոկտեմբերի 26-ին ի պատասխան Խորհրդիների երկրորդ համագումարի կողմից ընդունված «Խաղաղության մասին դեկրետի» առաջ քաշվեցին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի «14 կետերը», որոնցով պետք է քողարկվեր հետպատերազմյան դիվանագիտական մրցապայքարը տերությունների միջև:¹ «14 կետերը» ընդունելը «Խաղաղության մասին դեկրետն» անհնարին էին դարձնում պարտված երկրների տարածքների կամ գաղութների բացահայտ անբասիան, ուստի ազդեցության գոտիների վերաբաժանումն իրականացվեց մանդատների սկզբունքի գոր-

¹ История Дипломатии (под ред. Громыко и т.д.) 2-е изд., т.3, Москва, 1965 г., ст. 26-27, 53, 57, 58, 112-115, 236.

ծաղրման միջոցով:² 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրով Կ.Պոլիսը, նեղուցները և Արևմտյան Հայաստանի մեծ մասը պետք է անցնեին Ռուսաստանին, սակայն Դաշնակիցները հաղթանակից հետո դեմ էին նեղուցները նրան հանձնելուն: 1918 թ. հունվարի 5-ին Լ. Ջորջը հայտարարությամբ հանդես գալով նշեց, որ նեղուցները պետք է միջազգայնացվեն, իսկ քանի որ դրանց պատկանելիության խնդիրը սերտորեն կապվում էր Արևմտյան Հայաստանի հարցի հետ, առաջարկվեց միասնական մանդատ սահմանելու անհրաժեշտությունը:

Անթույլատրելի համարելով միջազգային վերահսկողությունը՝ Դաշնակիցները որոշեցին, որ մանդատը պետք է տրվի մեկ պետության՝ ԱՄՆ-ին:³ Սակայն «անշահախնդիր» Միացիալ Նահանգների նախագահը ցանկանում էր Ազգերի լիգան և դաշնակիցներին օգտագործել հետպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական գերակայության ապահովման համար: Վ. Կիլսոնի ծագումների և Անգլիայի ու Ֆրանսիայի շահերի հակադրությունը Հայաստանի մանդատի հարցը դարձրեց դիվանագիտական սակարկման առարկա, ինչն էլ կանխորոշելու էր հարցի լուծման անբարեհաջող ելքը: Դեռ մինչև Խաղաղության խորհրդաժողովի բացումը հայերը բախվեցին Թուրքահայաստանի և Կիլիկիայի շուրջ գոյություն ունեցող հակասություններին: Այսպես՝ 1919 թ. հունվարի 9-ին Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարն անգլիական պատվիրակության անդամ Լ. Մալլեթի հետ հանդիպման ժամանակ բողոքում էր, որ ֆրանսիացիները պահանջում են ֆրանսիական պրոտեկտորատը Հայաստանում՝ Վանից մինչև Երևան տարածությամբ Կիլիկիան Սիրիային միացնելու պայմանով: Համաձայն չլինելով դրա հետ՝ Նուբար փաշան անգլիացիներից և ԱՄՆ-ից երաշխիքներ էր խնդրում ինչպես նաև առաջ էր քաշում նոր հանրապետության անկախության ճանաչման հարցը: Այն իր տարածքում պետք է ներառեր նաև Ադանան և Դերսիմը: Ընդունելով Ազգերի լիգայի խնամատարության գաղափարը՝ Պողոս Նուբարը գտնում էր, որ Սայքս-Պիկոյի պայմանագրով Ռուսաստանին հատկացվող տարածքը պետք է զբաղեցներ Բրիտանիան, սակայն Նուբար փաշան պատասխաններ չստացավ:⁴ Ավելի ուշ Փարիզում գտնվող բրիտանական պատվիրակության անդամներ Լ. Մալլեթի (մերձավորարևելյան հարցերի գծով գլխավոր խորհրդական), նրա տեղակալ Ա. Թոյնթի և գնդապետ Ռ. Նյուկոմբի խորհրդակցությունների արդյունքում կազմվեց զեկույց, որն ուղարկվելու էր Արտգործնախարարություն: Այն պարունակում էր Պողոս Նուբարի հակաֆրանսիական տրա-

² Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, Երևան 1972, էջ 410:

³ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999 թ., էջ 191-192:

⁴ Նույն տեղում, էջ 205:

մադրություններին համարժեք գնահատականներ: Վերոհիշյալ զեկույցը Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ա. Բալֆուրը ստացավ հունվարի 20-ին, որում խոսվում էր հայերի հետ ունեցած մտավախության, Կիլիկիայում ֆրանսիական Արևելյան լեգեոնի ջոկատների հետագա ներկայության անմպատակահարմարավետության և այլ հարցերի մասին: Լ. Մալլեթը հակասական գնահատականներ ու առաջարկներ պարունակող այս զեկույցի վերջում գալիս է այն եզրահանգման, որ խնամակալ տերությունը, որը կստանա Հայաստանի մանդատը, դեռ երկար ժամանակ ստիպված կլինի պահել նորաստեղծ պետությունը ամուր ձեռքերում: Լ. Ջորջն ելույթ ունենալով Գերագույն ռազմական խորհրդի նիստերում (հունվարի 12-ին, 13-ին, 15-ին և 17-ին) անընդունելի էր համարում հարցերի լուծումը դնել քվեարկությամբ՝ չցանկանալով առաջնային դիրքերը զիջել ԱՄՆ-ին:

Լ. Ջորջը առաջարկում էր քննարկումները սկսել Ռուսաստանից (առանց նրա սահմանների որոշման), Արևելյան հարցից և զաղութներից: Նա գտնում էր, որ յուրաքանչյուր յուրացված տարածք պետք է ղեկավարվի մեկ երկրի կողմից, սակայն դրան հակադրվում էր Վ. Վիլսոնի առաջարկած մանդատների համակարգը, որը ենթադրում էր միջազգային կառավարում: Սակայն ԱՄՆ-ի նախագահը չէր շտապում կոնկրետ խնդիրներ լուծել, այլ ցանկանում էր ստեղծել Ազգերի լիգան, որն ԱՄՆ-ի համար Եվրոպայի գործերով զբաղվելու գործիք էր դառնալու: Վ. Վիլսոնը հողերի բաժանման հարցը կապում էր պարտքերի հետ, որոնք կուտակել էին պատերազմի ընթացքում: Անգլիան ու Ֆրանսիան չէին ցանկանում, որ զաղութների հարցն առնչվի Հայաստանի կամ օսմանյան մյուս տարածքների ճակատագրի որոշման հետ: Անգլիան Ռուսաստանի նկատմամբ ավելի չափավոր դիրքորոշում էր որդեգրել, սակայն թե՛ նրա կառավարությանը, և թե՛ ԱՄՆ-ին ձեռնտու էր անկայուն վիճակը Ռուսաստանում: Դրանով երկու երկրներն ազդվում էին Արևելյան հարցի կարգավորմանը անցանկալի մրցակցի մասնակցությունից, Բրիտանացիները ցանկանում էին ճշտել կողմերի մտադրությունները Օսմանյան կայսրության նկատմամբ: Այդ պատճառով Լ. Ջորջը հունվարի 23-ին սկսեց խոսել օսմանյան պարտքի վճարումների մասին՝ ակնարկելով, որ թուրքական տարածքները՝ որպես մանդատ վերցրած երկրներ ստիպված են մարել այն: Նա նույն միտքը կրկնում էր հունվարի 27-ին նշելով, որ մանդատները եկամուտ կբերեն միայն ապագայում: Սակայն Անգլիան չպատասխանեց սեփական պարտքերի պատճառով հողերի անհապաղ բաժանման և զիջումների գնալով:⁵ Հաջորդ օրը՝ Լ.

⁵ **Գոդան Եդիտա**, Հայաստանի առաջին համրապետությունը և Ազգերի լիգան, Երևան, 2013, էջ150-153

Ջորջը համաձայնվեց մանդատների սկզբունքը կիրառել անգլիացիների կողմից գրավված թուրքական տարածքների նկատմամբ: Անդրկովկասում իր ներկայությունն ամրապնդող և ֆրանսիական կողմին Սիրիան զիջել չցանկացող Անգլիան պահանջում էր իր դաշնակիցներից հնարավորինս շուտ ընդունել որոշումներ մանդատի վերաբերյալ: ԼԼ. Ջորջը 1915-1917 թթ. գաղտնի համաձայնագրերի մասին խոսելիս դրանք համարում էր «նախնական»՝ այն դեպքում, երբ այդ ժամանակահատվածում էր կնքվել նաև Հաուզ-Գրեյ համաձայնագիրը, որից ամրագրվում էին ԱՄՆ-ի և Օսմանյան կայսրության ամրապնդած շահերը: Տեսնելով որ հնարավոր չէ նորամուծություններից խուսափել, Լ. Ջորջը հունվարի 29-ին կազմեց «Մանդատների մասին բանաձևերի նախագիծը», որը քննարկման ներկայացվեց հունվարի 30-ին:⁶ Նախագծի II կետում նշվում էր, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան պետք է անջատվեն Թուրքիայից, նրանց նկատմամբ պետք է կիրառվի մանդատների սկզբունքը, իսկ որպես մանդատատեր պետք է համդես գան անհրաժեշտ ռեսուրսներ, փորձ կամ նպաստավոր աշխարհագրական դիրք ունեցող երկրները:

Ռեսուրսներն ու փորձը ենթադրում էին ԱՄՆ-ին և Ֆրանսիային, աշխարհագրական դիրքը՝ Ռուսաստանին, որին ի տարբերություն իր գործընկերների, Լ. Ջորջը հաշվից չէր հանում: Փաստաթղթում նշվում էր, որ որոշ հանրություններ հասել են զարգացման այն մակարդակի, երբ կարելի է նախապես ճանաչել նրանց որպես անկախ ազգեր, սակայն նրանք պետք է որոշ ժամանակ, մինչև կկարողանան ինքնուրույն գոյություն պահպանել, կառավարվեին մանդատատեր երկրների կողմից: Փաստորեն, սրանից հետևում էր, որ պաշտոնապես չճանաչված ՀՀ-ն նույնպես դիտվում էր որպես որևէ տերության ենթամանդատային տարածք, իսկ թե, որ երկիրը պետք է լինի մանդատատեր, դեռ պետք է պարզել: Ուշագրավ է նաև այն, որ չէին նշվում մանդատների այն ժամկետները, որոնցից հետո ենթամանդատային տարածքը կարող էր անկախանալ: Քննարկումների ժամանակ Վ. Վիլսոնն աշխատում էր արգելափակել հողային խնդիրների արծարծումը, իսկ Լ. Ջորջը, ի պատասխան դրա, զգուշացնում էր, որ նման գործելակերպը կարող է աղետաբեր լինել: Անգլիայի վարչապետը չէր թաքցնում, որ բրիտանական զորքերը չեն մնալու Թուրքիայում ոչ՝ խաղաղության մամուլությունը այնտեղ պահպանելու, ոչ՝ էլ ապագայում թուրքերի համար անընդունելի պայմանագրի իրագործումն ապահովելու համար:⁷ Նա հայտարարում էր, որ հրաժարվում էր Սիրիայի մանդատից, Հա-

⁶ **Махмурия Г. Г.**, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Время белого человека, Ереван, 2002, ст. 79-80.

⁷ Նույն տեղում:

յաստանի մի մասից և հնարավոր է նաև Կովկասից՝ չնայած վերջինս հարուստ է նավթով: Հունվարի 30-ին տեղի ունեցած բանակցությունները կարևոր նշանակություն ունեին, և հենց այդ օրը Լ. Ջորջն անհաջող կերպով ընդդիմանում էր ֆրանս-ամերիկա-իտալական խմբավորման գրոհներին: Նա ուզում էր, որ Գերագույն Ռազմական Խորհուրդը մշակի Օսմանյան կայսրության «առավել հավասարակշռված և տնտեսող» օկուպացիայի ծրագիր՝ առաջարկելով ամերիկյան Հայաստանի և բրիտանական Միջագետքի տարբերակներ: Երբ ԱՄՆ-ը, Ֆրանսիան և Իտալիան խոսք բացեցին Անդրկովկասի միասնական օկուպացիայի մասին, Լ. Ջորջը մտավախություն հայտնեց, որ ֆրանս-իտալական ուժերը երկրամասում չեն կարողանա ամրանալ տարհանվող բրիտանացիների ռազմական աջակցությունից զուրկ լինելու պարագայում: Ակնհայտ էր, որ Անդրկովկասի մասին խոսելիս Դաշնակիցները ստիպված էին հաշվի նստել Ռուսաստանի դերի և ապագա հնարավորությունների հետ, և անգլիացիներն իրենց դաշնակիցներին հրավիրում էին զբաղվելու Օսմանյան կայսրության ներքին շրջաններով՝ չցանկանալով տեսնել այլ երկրների ռազմական ներկայությունն Անդրկովկասում: Սակայն նրա ընդդիմախոսները չզիջեցին և հանձնարարեցին Գերագույն Ռազմական Խորհրդին որոշել, թե Անդրկովկասի և Թուրքիայի որ շրջանները և ինչ քանակությամբ զորքերով կարելի է օկուպացնել, ինչպես նաև որոշել՝ հնարավոր է արդյոք միասնական օկուպացիա, թե յուրաքանչյուր տերություն ստանալու է իր գոտին: Պետք է նշել, որ հունվարի 30-ի քննարկումները ցույց տվեցին, որ ԱՄՆ-ը կարողանում է ստեղծել դիվանագիտական խմբավորումներ և նրանց միջոցով առնչվել բրիտանական շահերին Միջերկրականում և Մերձավոր Արևելքում:⁸ Սակայն դա չէր անհանգստացնում Լ. Ջորջին, քանի որ ԱՄՆ-ի պահանջներն ամրապնդված չէին զինուժով կամ այն գործածելու մտադրությամբ, իսկ առանց արտադրանքի վերոհիշյալ ունեցություններն ընդամենը պայմաններ էին ստեղծում դիվանագիտական սակարկման համար: Ընդհուպ մինչև օգոստոս ամիսը Բրիտանիան պնդում էր 1915 թ. ապրիլի 26-ի Լոնդոնի և Սալթս-Պիկոյի համաձայնագրերի վրա հենվելով որոշումներ ընդունել, իսկ ԱՄՆ-ի ղեկավարը համոզեւ էր զալիս միջազգային վերահսկողություն սահմանելու տեսակետի առաջադրմամբ: Իտալիան և Ֆրանսիան խուսաճալում էին այդ մոտեցումների պարագայում, և Ֆրանսիայի դերը սկսվեց շեշտադրվել միայն երբ ԱՄՆ-ը հեռացավ Արևելյան հարցի կարգավորման գործընթացից: Փետրվարի 1-ին Գերագույն Ռազմական Խորհուրդը ներկայացրեց մի գրություն, որը պատվիրակությունների ղեկավարները քննարկեցին փետրվարի 10-ին: Նրանում չէր

⁸ Նույն տեղում, էջ 86:

նշվում զորքերի կոնկրետ թիվ, իսկ օկուպացիոն գոտիները պետք է բաժանվեին հետևյալ կերպով. Ֆրանսիային տրվում էր Կիլիկիան, իտալացիներին՝ Անդրկովկասը, բրիտանացիներին՝ Մոսուլը: Սակայն դա ակնհայտորեն դուր չեկավ անգլիական պատվիրակության ղեկավարին: Լ. Ջորջը պահանջում էր «Դաշնակիցների միջև բեռնի հավասարաչափ բաժանում»: Երբ անգլիացիները պահանջեցին Վիլսոնից, որ նա զորքեր տրամադրի նախատեսվող օկուպացիան իրականացնելու համար, ամերիկյան կողմը հերթական անգամ բացասական պատասխան տվեց և այդ պատճառով համատեղ օկուպացիայի հարցը հանվեց օրակարգից:⁹ Երեք օր անց ամերիկյան կողմը պահանջեց հանձնաժողով ուղարկել տարածաշրջան՝ տեղում բնակչության տրամադրություններն ապագա խնամակալության նկատմամբ պարզելու համար: Դրան հակադարձեց Անգլիայի արտգործնախարար Ա. Բալֆուրը՝ նշելով, որ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերի հետևանքով հայերի թվաքանակը խիստ նվազել է և այդ պատճառով ինքնորոշման իրավունքն այնտեղ չի գործելու: Վ. Վիլսոնը ստիպված էր պատասխանել, որ չի կարող ընդունել այն «ամենը» ինչ առաջարկում էր անգլիական կողմը: Մայիսի 19-20-ին անգլիացիները մշակել էին «Թուրքական կայսրության կարգավորման սխեմա» վերնագրով փաստաթուղթ, որը քննարկման դրվեց մայիսի 21-ին: Նրանում ԱՄՆ-ին առաջարկվում էին տարբեր մանդատային տարբերակներ եվրոպական Թուրքիայում, Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում:¹⁰ Այնուհետև Լ. Ջորջը երկար ճառ արտասանեց, որում պաշպանում էր Փոքր Ասիայի և Անատոլիայի ամբողջականությունը՝ միանգամից նշելով այն շրջանները, որոնք պետք է ազատվեն օսմանյան ենթակայությունից: Դա Ջմուռնիան էր, Հայաստանը, արաբական շրջանները: Մնացած շրջանները պետք է թողնվեին թուրքական սուլթերենության տակ: Այնուհետև հետ կանգնելով իր «Սխեմայից»՝ նա առաջարկում էր Հայաստանի համար Միացիալ Նահանգների, Միջագետքում՝ Բրիտանիայի և Սիրիայում՝ Ֆրանսիայի մանդատները: Անատոլիայի և Կ.Պոլսի մանդատները կամ պետք է թողնվեին Իտալիային, կամ այդ տարածքներում պահպանվելու էր սուլթանի սուլթերենությունը: Սակայն բրիտանացիները չէին թաքցնում, որ Իտալիային՝ Փոքր Ասիայում, առաջարկություններ անելով նպատակ ունեին միայն նրա ուշադրությունը շեղել: Անդրկովկասից միակ հնարավոր լուծումն այդ պարագայում, ըստ անգլիացիների, սուլթանի իշխանության վերականգնումն էր ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ ներքին շրջաններում: ԱՄՆ-ին կանգնեցրին տիպիկ ընտրության առջև. ընդունել ման-

⁹ Գոլյան Էդիտա, Հայաստանի առաջին Հանրապետությունը և Ազգերի լիգան, Եր., 2013, էջ 155

¹⁰ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999 թ., էջ 215-217

դատ Կ. Պոլսի կամ Անատոլիայի վրա, ընդ որում՝ երկու դեպքում էլ սուլթանը ելք պետք է ունենար դեպի Մարմարե ծով: Որպես լրացում ԱՄՆ-ին առաջարկում էին Արևմտյան Հայաստանը՝ Կիլիկիայով հանդերձ, սակայն, երբ Վ. Վիլսոնը փորձում էր ավելին ստանալ վարչապետը հակառակվում էր դրան:

1919 թ. աշնանը ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը Մերձավոր Արևելք և Անդրկովկաս ուղարկեց գեներալ Հարբորդի հանձնախումբը: Այն կազմված էր զինվորականներից, տնտեսագետներից, պատմաբաններից և այլ մասնագիտությունների տիրապետող փորձագետներից: Հանձնախումբը նպատակ ուներ, տեղում ծանոթանալով Հայաստանի մանդատին առնչվող բոլոր հարցերին, համապատասխան զեկուցագիր կազմել Կոնգրեսի համար: 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հանձնախումբը եղավ Կ.Պոլսում, Կիլիկիայում, Սիրիայում և Արևմտյան Հայաստանի վիլայեթներում: Սեպտեմբերի 25-27-ը Հարբորդը եղել է նաև Երևանում, ուր ՀՀ կառավարությունը ներկայացրել է նրան ամերիկացիներին հետաքրքրող 40 հարցերի պատասխաններ անփոփող ընդարձակ զեկուցագիր: Ուսումնասիրելով Փոքր Ասիայում և Անդրկովկասում ԱՄՆ-ի շահերի հետ առնչվող քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ կարգի խնդիրների՝ Հարբորդի հանձնախումբը կազմեց մի զեկուցագիր, որը Միացիալ Նահանգների կառավարությանը ներկայացվեց հոկտեմբերի 16-ին: Զեկուցագիրը բաղկացած էր 4 բաժիններից, որոնցից առաջին 3-ը վերաբերում էին հայ ժողովրդի պատմությանը, նրա ներկա վիճակին, տարածաշրջանում իշխող քաղաքական իրադրությանը և մանդատի ընդունման հետ առնչվող հարցերին: Առաջին բաժնում նշելով, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ ապրել է իր հայրենիքում, զեկուցագրի հեղինակները՝ որպես հիմք ունենալով «թուրքական կառավարության պաշտոնական զեկույցները», նշում են, որ պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանում թուրքերը կատարել են այնպիսի ոճրագործություններ, որոնք «մարդկությանը ընդմիշտ պետք է գցեն սարսափի մեջ»:¹¹ Հարբորդը Անդրկովկասի հանրապետությունները գնահատում է որպես «կաշառվող, անընդունակ ու սնանկացած» ինչպես նաև ուշադրություն դարձնելով անդրկովկասյան հանրապետությունների քաղաքական տրամադրություններին՝ նշում է Հայաստանի ռուսական կողմնորոշումը: Զեկուցագրի հեղինակները գտնում էին, որ Հայաստանի և Անդրկովկասի, ինչպես նաև Կ. Պոլսի ու Անատոլիայի համար տրվող մանդատները պետք է ստանձնի մեկ պետություն: Հետաքրքիր է, որ 1919 թ. հոկտեմբերի 1-ին դիմելով Հարբորդին՝ Ս. Քեմալը խնդրում է ԱՄՆ-ին «պաշտպանել» Անատոլիայի և թուրքական մյուս

¹¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 243

տարածքների իրավունքները՝ նշելով, որ իրենց նպատակն է պահպանել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, չշահագրգռված տերության՝ գերադասելի է Ամերիկայի մանդատի ներքո:

Այսպիսով դաշնակից տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները գաղտնիք չէին քննալականների համար, և թուրքական հաղթավարի համար կոծկ տվող Եվրոպային Թուրքիայի ազգայնականները հակադրում էին «միասնական» մանդատի կողմնակից ԱՄՆ-ին: Մ. Քեմալը հայ-թուրքական հարաբերությունների լարվածության հիմնական պատճառը տեսնում է եվրոպական դիվանագիտությունների խարդավանքների մեջ՝ ընդգծելով որ թշնամաբար չի տրամադրված ԴԴ-ի նկատմամբ «... որի կենտրոնը Երևանն է»:¹² Դոկտեմբերի 9-ին պատասխանելով Քեմալին՝ Հարբորդը նշել է, որ ԱՄՆ-ի կառավարությունը մշտապես հետաքրքրվում է հայերի անվտանգության հարցերով և հույս է հայտնում, որ քննալականները ոչ մի դեպքում թշնամաբար չեն վերաբերվի օսմանահպատակ քրիստոնյանների հետ: Սակայն հայերի վիճակն ամենկին չէր լավացել Թուրքիայում, և 1919թ. հոկտեմբերի 15-ին Կ. Պոլսի պատրիարք Ջավենը, այդ փաստի կապակցությամբ բողոքելով, հույս էր հայտնում, որ «Ամերիկյան հաստատ կփրկի իրադրությունը»: Ինչ վերաբերում է Թուրքիայից անջատ Հայաստանի ստեղծման հարցին, ապա զեկուցագրի հեղինակները քիչ հավանական էին համարում փոքրամասնություն կազմող հայերին իշխանություն տալու օգտակարությունը: Այդ հարցը, ըստ նրանց, կարող է վերջնականապես լուծվել, եթե գտնվեն 2 խիստ կարևոր հարցերի պատասխաններ՝ ի՞նչ պետք է անել Թուրքիայի հետ և ի՞նչ է պատրաստվում անել Ռուսաստանը: Զեկուցագրում մեծ տեղ է հատկացվում մանդատի իրականացման համար անհրաժեշտ նախատեսվող ռազմական ծախսերին: Նշվում էր, որ անվտանգության նկատառումներով ենթամանդատային տարածքում անհրաժեշտ կլինեն պահել 25-200 հազար զինվոր: Այդ դեպքում առաջին տարում կծախսվեն 88.5 մլն. դոլլար: Նախատեսվում էր, որ մանդատի իրականացման հնարավոր նախապայմանները պետք է լինեն Անգլիայի և Ֆրանսիայի պաշտոնական համաձայնությունը, ինչպես նաև Գերմանիայի ու Ռուսաստանի որոշակի հավանությունը: Ինչը, եթե հաշվի առնենք նշված երկրների արտաքին քաղաքական նպատակները, միանգամայն անհնարին էր ապահովել:

Զեկուցագրի «Եզրակացություններ» բաժնում հանձնախումբն իր կարծիքն է հայտնում մանդատի ընդունման նպատակահարմարության վերաբերյալ՝ մտավախություն հայտնելով, որ մանդատի ընդունումը իր հետևից կբերի

¹² Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999 թ., էջ 221

ման ԱՄՆ-ի պատասխանատվությունը «հզարավոր ծագող բարդ պրոբլեմները լուծելու» խնդրի առնչությամբ: «Պրոբլեմների» շարքին էին դասվում Հայաստանում տնտեսության քայքայված վիճակը, առկա ազգային-տարածքային հակամարտությունները, ինչպես նաև այն, որ ենթամանդատային տարածք դարձվող տարածաշրջանում, ի թիվս այլոց, խաչաձևվում էին քեմալականները և Սովետական Ռուսաստանի շահերը:¹³

Դեպքերի հետագա զարգացումը ցույց էր տալու, որ տնտեսական մեթոդներով նվաճողական քաղաքականության իրականացմանը նախապատվություն տվող ԱՄՆ-ի կառավարությունը, հակառակ իր տված հայանպաստ խոստումներին, չէր ստանձնելու տնտեսական և ռազմական առումներով կորստաբեր Հայաստանի մանդատը:

Բանալի բառեր - Ադանա, Դերսիմ, Արևմտյան Հայաստան, Կիլիկիա, Մոսուլ, Կ. Պոլիս

THE ISSUE OF MANDATE FOR WESTERN ARMENIA

R. S. HARUTYUNYAN

Librarian of GSU

The issue of mandate for Armenia has always been the focus of attention for European countries, as well as Russia. Europe viewed the solution of mandate for Armenia from the point of his interests as Armenia has always been a ball of contention between superpowers. When Europe wanted something from Turkey, he put forth the Armenian Issue. The issue of mandate for Armenia could not be given a final solution as the interstate interests of major powers confronted here.

ВОПРОС МАНДАТА ЗАПАДНОЙ АРМЕНИИ

P. C. АРУТЮНЯН

Библиотекарь ГГУ

Вопрос мандата Армении всегда был в центре внимания европейских стран, а также в центре внимания России. Решение вопроса мандата Армении Европа видела исходя из своих интересов, поскольку Армения всегда была яблоком раздора между сверхдержавами. Когда Европа рассчитывала получить что-то у Турции, то выдвигала Армянский вопрос. Вопрос мандата Армении не может получить окончательного решения, поскольку по данному вопросу сталкиваются интересы крупных держав.

¹³ **Махмуриян Г. Г.**, Политика Великобритании в Армении и Закавказье в 1918-1920 гг. Время белого человека, Ереван, 2002, ст. 79-80.